

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՌՅՀԲ-ՌՅՀԳ


ՀԱՏՈՐ

2

1923

ՅՈՒԼԻՍ

ԹԻՒ 7



ՍՅՅԵԼՈՒԹԻՒՆ

ՆՈՐԻՆ ԱՐԳԱՅԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ

ԳՍՀՍԺԱՌԱՆԳ ԻՇԽԱՆԻՆ ԻՏԱԼԻՈՑ

ՏՐԻ մ'առաջ Ուխտիս Տարե-
գրութեան կ'ընծայուէր հոյակապ
էջ մը՝ Ն. Բ. Մաֆալտա շնորհալիայ իշխա-
նուհոյն այցելութեամբ:


Եւ անա տարի մը վերջ՝ այսօր՝ պատիւ
կ'ունենանք ուրախութեամբ աւետելու նո-
րագոյն ոսկեղէն էջ մը՝ պանծալի այցելու-
թիւն մը եւս, զոր Մխիթարայ խոնարհ
Յարկիս հաճեցաւ տալ Ն. Ա. Բարձրութիւն
իշխանն Գահաժառանգ Ունպերդոյ:

Սավոյական Տան բարեացակամութիւնն
ու համակրութիւնը՝ արդէն ի սկզբանէ ի
վեր խորապէս երախտապարտ թողուցած
է ըզլանդակ Ուխտս: Այս խաղաղութեան
պարծանքով պիտի գգուի ի մեզնիս:

Յերմ սիրոյն անթարգմանելի նշանները, ու-
րոնք յաւերժօրէն վառ կը պահեն Մխիթա-
րեան սրտերու կանթեղները Անոր արքունի
Թագին առջեւ:

Մեր այս անպատում ուրախութեան,
գիտենք, արտով հաղորդ ու մասնակից ու-
նինք մեր սիրելի ազգակիցներն ալ, որոնք
մեզի պէս կը զգան, մեզի հետ կը բարա-
խեն, ցաւ եւ ուրախութիւն՝ հասարակաց
ըլլալով մէջերնիս. այնքան ուժգին է
առնչութիւնը՝ որքան Մխիթարայ կերտած
Միաբանութիւնը Հայրութեան սիրտն ուզած
են նկատել:

Հաստատութեան երկրարեան կեանքի
շրջանին մէջ՝ յուսոյ եւ լուսոյ սփոփարար
բոլոր նմանք են իրաւամբ այսպիսի բարե-
նշան հէմքեր, որոնք գիտեն իրենց աստեղին



արգասաքեր ըլլալ զանազան տեսակէտներու ըով:

Այո՛, կը մխիթարուին քչիկ մը մեր սրտերը, վասն զի մեր համազգային տառապանքներուն սուգի պահուն՝ կարծես նոր աւելտեսաց քարեգուշակ՝ իբրեւ կենսաշող արփի՝

ոմանցմէ կը՝ Ֆանչցուի քաղաքացի համազգեստին տակ շողշողացող Անոր իշխանափառ դէմքը:

Ս. Ղազարու շնորհած այցելութիւնը տեղի կ'ունենայ հետեւեալ կերպով.

Յուլիս 16ին՝ երեկոյեան ժամ 5ին տաս-



Ն. Ա. Բ. Գահաժարամզ Իշխան Խտալիոյ

փայլեցաւ մեր մէջ Ն. Ա. Բարձրութիւնը, որուն թողած տպաւորութիւնը չի կրնար ամուլ մնալ ապագային:

Ո՛չ Վինետկեցի ժողովուրդը եւ ոչ մենք տեղեակ էինք, թէ Մեծ Իշխանս հիւր էր Ադրիոյ Թագուհւոյն քով, վասն զի գալուստը պաշտօնական հանգամանքով չէր այս անգամ. ու միայն դէպքով մը կը տարածուի լուրը կայծակի արագութեամբ՝ երբ

նեակ մ'ոստիկաններ շոգեմակոյցով վանք կը հասնին ու կը հաղորդեն թէ կղզեակս քիչ ատենէն թանկագին Այցելու մը պիտի ունենայ յանձին Խտալիոյ Գահաժարամզ Իշխանին:

Անակնկալ էր աւետիսը, մանաւանդ որ դեռ անծանօթ էր իր ներկայութիւնը քաղաքիս մէջ: Կը փութանք անմիջապէս ըստ կարելոյն արժանապայել ընդունելութիւն

մը պատրաստել։ Բնական Գիտութեանց
Դահլիճի պատշգամէն կը պարզուի անմի-
ջապէս Խտալական եռագոյնը։ Եւ անա-
ժամը քառորդ չանցած՝ կը հասնի իշխա-
նական շուգեմակոյկը։ Ընդ առաջ կը փու-

լումբիւններ՝ կ'առաջնորդենք զինք դէպ ի
Մայր Դուռ։ Կ'անցնինք Մողմոնեան Սրա-
նէն ու կը դիմենք Եկեղեցի, ուր մասնաւոր
ուշադրութեամբ ու գորովանքով կը դիտէ
Ն. Վ. Մարգարիտայ Մայր Թագուհւոյն



Ն. Ա. Բ. Մարգարտա Իշխանուհի

Թանք Հայրերս ու կը դիմաւորենք Ն. Ա.
Բարձրութիւնը, որուն կ'ընկերեն իր վա-
րիչը Ծովակալ Պոնալտի, Մարգի Մարիոյ
ինչիզա տեղա Ռոքքեդէ, եւ Գնդապետ
Գամբանեարի։

Յետ յայտնելու մեր յարգալիր մեծա-
րանքներն ու կանխելու խորին շնորհակա-

լնծայած շքեղափառ վարագոյրին ճակա-
տը փայլող Սավոյիոյ Տան զինանշանը, ինչ-
պէս նաեւ Ն. Վեհափառութեան կողմէ Ս.
Կուսին ընծայուած ուխտական կանթեղը,
որ այն պահուն բոսորափայլ վառվռուն
սիրտ մը կը խորհրդանշէր։

Կ'անցնինք դէպ ի Սեղանատուն, ապա

Թանգարան եւ Գրատուն, ուր զմայանքով կը դիտէ հնութիւններն ու արուեստի արտադրութիւնները: Խիստ կը հետաքրքրեն զինք հայ ձեռագիրները, որոնցմէ մանրանկարուած գեղեցիկ էջեր կը ցուցուին: Հոս է որ Սկեզքբէին մէջ իր այցելութեան անդրանիկ յիշատակը կ'արձանագրէ: Ապա անցնելով պատկերասրահներէն՝ կ'անաշնորհենք ճեմարան եւ անտի բնական Գիտութեանց Դահլիճը: Ո՛չ մէկ նկար վրիպեցաւ

ուշադրութեամբ դիտեց ու գնահատեց՝ լոյս տեսած բազմաթիւ քանդակներ, պատկերազարդ հրատարակութիւններ: Մեկնելէ առաջ Միաբանութեան կողմանէ ներկայացուցան Ն. Ա. Բարձրութեան՝ ի յիշտակ իւր շնորհաբեր այցելութեան՝ Հ. Ալիշանի (գաղութագր.) «Սխուռն»-ը՝ վննետկեան ոսկեդրուագ նկարագեղ փառակազմ, «Գեղունի», «Հաւատով խոստովանիմ» 36 լեզուով,



Գահաժառանգ Ումպերդոյ Ս. Ղազարու մէջ

Ն. Բարձրութեան մասնաւոր ուշադրութեան: Բարցափորձեց, հետաքրքրուեցաւ Միաբանութեան կազմին, գործունէութեան եւ հայկական Եւսփն շուրջ: Սոյն Դահլիճին մէջ պատուասիրեցինք զինքը արեւելեան վարդանոյշով եւ ըմպելիով: Հոն քառորդի մը չափ հանգիստ առնելէ վերջ դիմեցինք դէպ ի Սքքայարան տանող սրահը, որուն պատերը երկուստեք ծածկուած են մեր բազմաթիւ Նախորդաց վսեմ դիմանկարներով: Մի առ մի դիտեց զանոնք՝ մերձ անուններն ալ հարցնելով: Հասած էր Տպարանին առջեւ, ուր կը մտնէ՝ «Հռչակաւոր է այս» ըսելով: Մեծ

«Յուշանկարը Պատմութեան Հայոց», «Զարդանկարը Աւետարանի Միջէ Թագուհւոյ», եւ այլն:


Եւսփն աւելի էր որ Հայոց կղզին կը վայելէր Բարձր. Հիւրին ներկայութիւնը: Բայց վերջին հմայքը պիտի ստանար վառքիս Ութանկին բարձրաւարտակն վրայ, խաղաղաւէտ լճակիս առջեւ, լուսահասանջ արեւմուտքի մը դիմաց: Կարծես անջնջելի յիշատակն յաւերժացման մը ծէսն էր որ պիտի կատարուէր: Հետեւորդաց յօժարակամ Թոյլութիւնը խրախոյս տուած էր Հայերէ ռմանց՝ լուսանկարելու հոն իսկ Ն. Ա. Բարձրութիւնը, որուն ստիպման

տեղի տալով ներկայ վարդապետներս ալ կը բողբոլինք իր շուրջ։

Ահա այս դիրքին մէջ էր իշխանը՝ երբ յանկարծ գտնուեցաւ խանդավառ տեսաւ ընտել մը դիմաց։ Նոյն պահուն առջեւի ջրանցքէն կ'անցնէր Լիտոյի Գուադրոյ Ֆոն դանէի շագնաւը՝ որ բազմութեամբ լեցուն էր։ Անդադարձուելով իշխանին ներկայութիւնը՝ իսկոյն հրդեհուած սրտեր մէկ թափով ծափերու մէջ կը գոչեն։ «Կեցցէ՛

նանգին հետեւելով՝ իբրեւ թատերական բեմէ մը՝ կ'իջնենք բարձրաւանդակին աստիճաններէն։ Աւելի՛ ոգեւորուած ենք ընտել թեան սքանչելի տեսարանի մ'առջեւ տեղի ունեցած սրտագին ցոյցերէն։ Լուած են կոհակախառն ծափերը, բայց արծազանգները կարծես դեռ կը լսուին մեղմացող ալիքներուն պէս։

Կամրջակին վրայ Ն. Ա. Բարձրութիւնը ջերմօրէն կը սեղմէ վարդապետներուն ձեռ-



Հրաժեշտի պահում

Սալոյական Տունը»։ Ետեւ կը դառնայ Գահաժառանգը եւ ժպտագին կ'ողջունէ խանդավառուած շոգնաւը՝ որ մէկ կողմանէ կը հեռանար։

Ստուգիւ գեղեցիկ եւ անթարշամ պսակ մը պիտի մնայ ասիկայ։

Բեմական ներկայացում մը ամենէն աւելի գեղեցիկ եւ տպաւորիչ է՝ իր վախճանի պահուն։ Այդ ատեն է որ ուղիւստէն կը յորդի ներկաներու խանդավառութիւնը։

Ճիշդ այդպէս էր մեզ համար սոյն հանդիսաւոր պահը։

Այլեւս հրաժեշտի ժամն էր։ Գահաժա-

քերը՝ յայտնելով իր սրտագին գոհունակութիւնը։

Կը մեկնի շոգեմակոյկը, բայց միասին կը տանի նաեւ մեր յարգալիւր սէրն ու երախտագիտութիւնը՝ որ սրտերնէս կը գոչէ։ «Կեանք, Պայծառագեղ Արքայորդի, Մեծ Սէրաստացւոյն Յարկը միշտ սրտագեղ յարգանքով եւ անշնչելի սիրով պիտի յիշէ Օգոստափառ անունդ»։

ԽՄԲ.

